

Համաձայնագիր

Ք. Երևան

15 հունվարի 2009թ.

Սույն Համաձայնագիրը կնքվում է ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս նախարար Արմեն Մովսիսյանի և Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս տնօրեն Ռոբերտ Ֆալլետտայի միջև, որոնք համատեղ կոչվում են կողմեր: Համաձայնագրի նպատակն է 2008թ. նոյեմբերի 18-ին ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի ՓԲԸ-ի միջև կնքված Փոխըմբռնման Հուշագրում սահմանված պարտավորությունների մանրամասն ամրագրումը: Սույն համաձայնագրով կողմերը պայմանավորվում են հետևյալի շուրջ.

Ընկերությունը համաձայն է իրականացնել հետևյալ միջոցառումները.

2008թ. նոյեմբերի 18-ից Ընկերությունը երեք ամիս ժամկետով ձեռնպահ կմնա Կապանի ձեռնարկության աշխատողների աշխատանքային պայմանագրերը լուծելուց ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի հիմքերով:

2008թ. նոյեմբերի 19-ից երեք ամիս ժամանակով Ընկերությունը իր աշխատողների մոտ 65 տոկոսին կուղարկի հարկադիր պարապուրդի: Վճարումը պարապուրդի ժամանակ կկատարվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածով սահմանված կարգով: Մնացած աշխատակիցները նույն ժամանակահատվածում կշարունակեն ամբողջ դրույքով վարձատրվող աշխատանքը:

Եթե երեք ամսվա ընթացքում մետաղի գները և առաջարկված այլ լուծումները նկատելի վերելք չապահովեն, ապա Կառավարությունը կաջակցի Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի ընկերության հայեցողությամբ գործողությունների նախկինում մշակված ծրագրի իրականացմանը:

Հարկադիր պարապուրդի ուղարկված աշխատակազմը Գլխավոր տնօրենի հայեցողությամբ ռոտացիոն կարգով կփոխարինվի լրիվ դրույքաչափով վճարվող աշխատակազմի հետ՝ որպեսզի հնարավորություն ստեղծվի առավելագույն թվով աշխատողների ընդգրկել աշխատանքային գործընթացի մեջ և նրանց համար ապահովել լրիվ դրույքաչափով վճարում: Այն աշխատողները, ովքեր աշխատանքային հանձնարարություն ստանալիս կամ հետ կանչելիս չեն ներկայանա աշխատանքի, կենթարկվեն համապատասխան կարգապահական տույժի՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի:

Նախարարությունը համաձայնվում է հետևյալի շուրջ.

1. Նախարարությունը համաձայն է երկարաձգել Շահումյանի հանքի լիցենզիայի ժամկետը և լիցենզային պայմանագրի ժամկետը: Մասնավորապես, նախարարությունը տալիս է իր համաձայնությունը.

ա. երկարաձգել լիցենզիայի ժամկետը 12 տարով՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջների համաձայն:

բ. փոփոխել լիցենզային պայմանագրում նշված հանքարդյունահանման ծավալները ըստ նախագծի:

Համաձայնության ենթակա հատուկ կետերն են.

1. Լիցենզիայի երկարաձգում 12 տարով՝ «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջների համաձայն:
2. Լիցենզային պայմանագրի երկարաձգում մինչև լիցենզիայի ժամկետի ավարտը՝ վերագնահատված պաշարների հիման վրա:
3. Պաշարների նոր հաշվարկը ներկայացված է փորձաքննության, որի հաստատումը ակնկալվում է 2009թ. հունվարին: Մինչև շահագործման նոր նախագծի մշակումը, լիցենզային պայմանագրի երկարաձգումը և փոփոխությունը կկատարվի գործող շահագործման նախագծի հիման վրա: Շահագործման նոր նախագծի հաստատումից հետո լիցենզային պայմանագրում կկատարվեն համապատասխան փոփոխությունները: Դատարկությունների լցումման խնդիրը լուծում կստանա նոր շահագործման նախագծում:
4. Լիցենզային պայմանագրի 2.1 կետով սահմանված արդյունահանված հանքաքարի տարեկան ծավալը սահմանել 300,000 տոննա՝ շահագործման նախագծի և ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:
5. Տարեկան լեռնային աշխատանքների զարգացման ծրագրի՝ լիցենզային պայմանագրով սահմանված պահանջը ենթակա չէ կատարման::
6. Պետք է կատարվի նոր լեռնահատկացում նոր հաստատված պաշարների հիման վրա՝ ներառյալ 700 մետր հորիզոնից ներքև գտնվող պաշարները: Կապանի պղնձի հանքավայրի բացող լեռնակապիտալ, նախապատրաստական, հետախուզական փորվածքների համալրի՝ Շահումյանի հանքավայրի համանման փորվածքների հետ փոխանակման հարցը ենթակա է լրացուցիչ քննարկումների հետազայում:
7. Լիցենզային պայմանագրի Հավելված 3-ի հատուկ պայմանների հետևյալ կետերը անհրաժեշտ է հանել, քանի որ.
 - ա. 2-րդ կետի պայմանները կատարված են,
 - բ. 3-րդ կետի պայմանները ներառված են հատուկ պայմանների 1-ին կետում,
 - գ. 4-րդ կետով սահմանված պայմանները քննարկվում են սույն փաստաթղթում,
 - դ. 5-րդ կետի պայմանները կատարված են,
 - ե. 6-րդ կետի պայմանները կատարված են:
8. Հատուկ պայմանների ցանկում պետք է ավելացնել նոր պայման, համաձայն որի ԳԳՄԶ-ի ուսումնասիրության ստորաբաժանման կողմից կատարվող լրահետախուզական աշխատանքների արդյունքում կարող է առաջանալ բաց մշակման անհրաժեշտություն, որը կպահանջի պաշարների վերագնահատում և, համապատասխանաբար, հանքի շահագործման նախագծի փոփոխություն:
9. Լիցենզային պայմանագրի Հավելված 2-ի 1.1. կետում «300հա» արտահայտությունը չի համապատասխանում տրամադրված ընդերքի տեղամասին և պետք է փոխարինվի «համաձայն տրամադրված ընդերքի տեղամասի» արտահայտությամբ:

10. Կառավարությունը կաջակցի ԳԳՄԶ-ին լեռնահատկացման տարածքում գյուղատնտեսական, անտառային և այլ նշանակության հողերի կատեգորիան ողջամիտ ժամկետներում արդյունաբերականի փոփոխելու հարցում՝ հնարավորություն ստեղծելով տարածքի արդյունաբերական զարգացման համար: Լեռնահատկացման տարածքի հողերը կտրամադրվեն ԳԳՄԶ-ին նախապատվության իրավունքով և առանց աճուրդի:

11. Արտակարգ տնտեսական պայմանների առկայության դեպքում, ինչպիսին է օրինակ ներկայիս համաշխարհային տնտեսական ճգնաժամը, այդ թվում նաև մետաղի խիստ ցածր գները, որի պատճառով անհնարին է դառնում արտադրանքի ողջամիտ գներով վաճառքը, արտադրական տարեկան սահմանված ծավալները պետք է ինքնաբերաբար նվազեցվեն՝ այդ իրավիճակի պատճառով կրած արտադրության պարապուրդին համապատասխան: ՀՀ Կոնցեսիայի մասին օրենքի հոդված 32-ի պահանջները, մասնավորապես առնվազն 3 տարվա մեջ նվազագույնս պահանջվող հանքարդյունահանվող ծավալները, պետք է նույնպես հաշվի առնեն այդ իրավիճակի պատճառով կրած արտադրության պարապուրդները:

2. Նախարարությունը համաձայնվում է հետ վերցնել Կենտրոնական հանքի լիզենզիան և չեղյալ համարել Ընկերության կողմից կատարման ենթակա պայմանագրային պարտավորությունները՝ բացառությամբ միայն հետևյալ բնապահպանական պարտավորությունների.

ա. Կենտրոնական բաց հանքի առնչությամբ Ընկերության բնապահպանական պարտավորությունները սահմանափակվում են հետևյալով.

i. Ընկերությունը բաց հանքի ռեկուլտիվացիայի աշխատանքներին մասնակցում է իր կողմից կատարված արդյունահանման աշխատանքների ծավալների մասնաբաժնի չափով:

ii. Կենտրոնական բաց հանքի ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվում են ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընկերությունը բաց հանքի ռեկուլտիվացիայի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ վճարումը կարող է կատարել մեկ նախնական վճարումով: Այս գումարը առաջարկվում է հատկացնել բաց հանքի բնապահպանական միջոցառումների համար նախատեսված դրամագլխին: Ենթադրվում է, որ սրանով բաց հանքի առնչությամբ ԳԳՄԶ-ի բնապահպանական պարտավորությունները պետք է համարվեն ավարտված:

Վերը նշված գումարը պետք է վճարվի ԳԳՄԶ-ի հանքի և ֆաբրիկայի շահագործման աշխատանքները վերսկսելուց հետո վեց ամսվա ընթացքում:

բ. Մինչև 2009թ. մարտի 25-ը կնքվում է կոնսերվացման վերաբերյալ պայմանագիր՝ ներառելով տեխնիկական առաջադրանքը և աշխատանքների կատարման ժամանակացույցը, որի հիման վրա Ընկերությանը տրամադրվում է Կապանի պղնձի հանքավայրի լիցենզիայի հրաժարման հավաստագիր:

3. Նախարարությունը համաձայն է, որպեսզի ուսումնասիրության լիցենզիան փոփոխվի և ուսումնասիրվող օգտակար հանածո «պղինձը» փոխարինվի «պղինձ, ոսկի բազմամետաղայինով»:

4. Այլ պայմանները հետևյալն են.

ա. Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը կօժանդակի ԱԱՀ-ի հետ վճարման գործընթացին, որպեսզի դրանք կատարվեն սահմանված ժամկետների ընթացքում:

բ. Նախարարությունը համաձայն է օգնելու Ընկերության լեռնափրկարարներին տալ լեռնափրկարարական գործունեություն իրականացնելու համար թույլտվություն:

գ. Նախարարությունը համաձայն է, որ օգնելու է Ընկերությանը իրականացնի չվճարված գիշերավճարների դիմաց փոխհատուցման գործընթացը 2009թ. հուլիսի 1-ից: Վճարումները կկատարվեն Ընկերության կողմից ողջամտորեն կազմված ժամանակացույցի հիման վրա՝ համաձայնեցված Նախարարության հետ:


դ. Նախարարությունը համաձայն է օգնել Ընկերությանը ստանալ ռադիո հաճախականության օգտագործման թույլտվություն՝ ռադիո ալիքներով գործող հեռակառավարման սարքավորումները հանքերում կիրառելու նպատակով:

ե. Նախարարությունը համաձայն է մոտ ապագայում կազմակերպել հանդիպում Ընկերության և վերջինիս գործունեությունը վերահսկող մի շարք նախարարությունների միջև: Մինչև հանդիպման կազմակերպելը Ընկերությունը կներկայացնի հանդիպման օրակարգը և քննարկման համար առաջարկվող հարցերի ցանկը:

ՀՀ Էներգետիկայի և Բնական
Պաշարների Նախարար, պարոն՝

Դինո Գոլդ Մայնինգ Զամբինի ՓԲԸ
տնօրեն, պարոն՝

Արմեն Մովսիսյան



Ռոբերտ Ֆալկետտա

